

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԿՆԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԸ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՉԱՐԱՆՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈԾ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆ ԸՆԴՈՒՆԵԳ

4 հոկտեմբերի **Լիտվայի Սեյմասի խոսնակ Վիկտորաս Պրանցկետիսին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանում ընդունեց Լիտվայի Հանրապետության խորհրդարանի՝ Սեյմասի խոսնակ Վիկտորաս Պրանցկետիսի գլխավորած պատվիրակությանը՝ ողջնկցությամբ ՀՀ ԱԺ փոխխոսնակ Լեմա Նազարյանի եւ Լիտվայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Սկրտչյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր գնահատեց նման մակարդակի փոխադրությունները, որոնք միտված են նպաստելու երկու երկրների միջեւ առկա հարաբերությունների առավել զարգացմանն ու գործակցության ոլորտների ընդլայնմանը, եւ ողջունեց այս ուղղությամբ երկուստեք ձեռնարկվող քայլերը:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ

եւ դատապարտման առնչությամբ՝ կարեւորելով դա ոչ միայն հայ ժողովրդի նկատմամբ արդարության վերականգնման, այլեւ մարդկության կյանքում նման ոճիւրների կանխարգելման տեսանկյունից:

Լիտվայի խորհրդարանի նախագահն իր հերթին անդրադարձավ պատվիրակության առաքելությանը եւ երկկողմ հարաբերությունների առավել արդյունավետ մանրամասնությանը՝ վերահաստատելով պատրաստակամությունը Լիտվայի հարուստ փորձառությամբ տարբեր հարցերում աջակցելու Հայաստանին: Պրն Վիկտորաս Պրանցկետիսը Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց նաեւ Լիտվայի Հանրապետության կրոնական խճապատկերը, խոսեց արժեքամակարգի մասին:



լեց, որ Գերմանիայի տարբեր Քրիստոնեական եկեղեցիների ու միջեկեղեցական կառույցների եւ Հայոց Եկեղեցու միջեւ ձեռնարկված կապերի ու գործակցության շնորհիվ այսօր իրականացվում են կրթական եւ սոցիալական մի

շարք ծրագրեր: Հայոց Հովվապետը անդրադարձ կատարեց նաեւ Գերմանիայի հայոց թեմի գործունեությանը եւ Բեռլինի հայ համայնքի կյանքին, պատասխանեց նաեւ ուխտավորների հարցերին:

7 հոկտեմբերի **ՀՀ-ում Իրաքի Հանրապետության ժամանակավոր հավատարմատարին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իրաքի Հանրապետության ժամանակավոր հավատարմատար Էզգադդին Ռաշիդ Հաջին:

Վեհափառ Հայրապետը նորանշանակ ժամանակավոր հավատարմատարին մաղթեց արդյունավոր առաքելություն Հայաստանում՝ ի շահ եւ ի բարօրություն երկու երկրների եւ ժողովուրդների: Հանդիպմանը Հայոց Հայրապետը խոսեց

հոգատար վերաբերմունքի՝ Հայոց ցեղասպանությունից հետո երկրում ապաստան գտած հայորդիները հնարավորություն են ունեցել ազատորեն ապրելու իրենց ազգային եւ հոգետոր կյանքով եւ իրենց նպաստը բերելու երկրի առաջընթացին:

Իր հերթին ՀՀ-ում Իրաքի ժամանակավոր հավատարմատարն անդրադարձ կատարեց հայ-իրաքյան համագործակցության արձանագրած արդյունքներին եւ հայ համայնքի կյանքին: Փոխադարձ կապերի զորացման գործում պրն Էզ-



հաստատեց, որ Հայաստանը եւ Լիտվան մշտապես ունեցել են բարեկամական կապեր՝ վերհիշելով լիտվացիների զորակցությունը հայ ժողովրդին Հայաստանի անկախության հռչակման եւ արցախյան գոյապայքարի սկզբնավորման օրերին:

Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց քրիստոնեական հավատքին եւ հայոց պատմության ընթացքում փորձությունների հաղթահարման գործում դրա կարեւոր դերակատարությանը՝ մասնավորապես խոսելով Հայոց Եկեղեցու առաքելության մասին:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց Լիտվայի իշխանություններին Հայոց ցեղասպանության ընդունման

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Լիտվայի Սեյմասի խոսնակը անդրադարձան նաեւ երկու երկրներին ու ժողովուրդներին հուզող խնդիրներին, տարածաշրջանում խաղաղության եւ կայունության վերահաստատման անհրաժեշտությանը եւ այդ համատեքստում դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ ձեռնարկվող քայլերին: Նորին Սրբությունը ներկայացրեց նաեւ այս կապակցությամբ Հայոց Եկեղեցու կողմից գործարկված խաղաղարարական ջանքերը:

Հանդիպման ավարտին Լիտվայի Սեյմասի խոսնակի գլխավորած պատվիրակությունն այցելեց նաեւ «Ալեք եւ Մարի Մանուկյան» զանա-տուն:



երկու երկրների միջեւ պատմականորեն ձեռնարկված բարեկամական կապերի մասին՝ հույս հայտնելով, որ պրն Էզգադդին Ռաշիդ Հաջին գործունեությունը կնպաստի նաեւ առկա գործակցության առավել խորացմանն ու զարգացմանը:

Անդրադառնալով Իրաքում հայ համայնքի կյանքին՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց, որ շնորհիվ Իրաքի իշխանությունների

զարդին Ռաշիդ Հաջին կարելու նկատեց Հայոց Եկեղեցու դերակատարությունը:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ Մերձավոր Արեւելքում տիրող մտահոգիչ իրավիճակի մասին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայեցեց երկրի գորակցությունը Իրաքի ժողովրդին, որպեսզի վերականգնի իր խաղաղ, ապահով ու բարօր կյանքի ընթացքը:

Շարունակությունը՝ էջ 2

Գերմանիայից ժամանած ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանում ընդունեց Բեռլինից (Գերմանիա) ժամանած մի խումբ ուխտավորների՝ գլխավորությամբ Վեհապատվելի Անդրեաս Գյուլստեի եւ պրոֆեսոր Պաուլ Իմհոֆի:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղանքները բերեց ուխտավորներին՝ ողջունելով նրանց այցը Հայաստան եւ համայն հայության հոգետոր կենտրոն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Ամենայն Հայոց Հայրապետն իր խոսքում անդրադարձ կատարեց հավատքի կարեւորությանը, ինչպես նաեւ քրիստոնեական հավատի դերակատարությանը հայ ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունն ուխտավորներին ներկայացրեց նաեւ պատմության ընթացքում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դիմագրված մարտահրավերները, Մայր Աթոռի ներկայիս գործունեությունը տարբեր ոլորտներում:

Նորին Սրբությունը գոհունակությամբ հավե-

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Սկիզբը՝ էջ 1

9 հոկտեմբերի

«Համագործակցություն հանուն արդարության և խաղաղության» համաժողովի մասնակից իրաքյան պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց հոկտեմբերի 10–14-ը Արցախում կայանալիք «Համագործակցություն հանուն արդարության և խաղաղության» համաժողովի մասնակից Իրաքի պատվիրակության անդամներին:

ղաղության հաստատման համար: Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց երկու ժողովուրդների բարեկամությանը և առկա հարաբերություններին, կարելի է հանուն խաղաղության գործադրվող բոլոր ջանքերը: Խոսելով Մերձավոր Արևելքում վերջին տարի-



Ողջունելով պատվիրակության մասնակցությունը համաժողովին՝ Հայոց Հայրապետն ընդգծեց այդպիսի նրանց ավանդը հանդուրժողականության մթնոլորտի ձևավորման գործում՝ իբրեւ կարելի է նախապայման ժողովուրդների համակեցության և տարածաշրջանում խա-

ներին տեղ գտած ցավալի զարգացումների մասին՝ Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ Իրաքի ժողովուրդը Բարձրալի օգնականությամբ կկարողանա հաղթահարել բոլոր մարտահրավերները և վերագտնել իր խաղաղ և բնականոն կյանքը:

10 հոկտեմբերի

«Եկեղեցին և ընտանիքը 21-րդ դարում. արժեքներ և մարտահրավերներ» միջազգային համաժողովի մասնակիցներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց «Եկեղեցին և ընտանիքը 21-րդ դարում. արժեքներ և մարտահրավերներ» խորագրով միջազգային համաժողովի մասնակիցներին:

Համաժողովի կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ Եսայ Խաչատրյանը Նորին Սրբությանը տեղեկացրեց համաժողովի ընթացքի և արդյունքների մասին՝ կարելի է նման համաժողովների առաքելությունը մարտահրավերների հաղթահարման ուղիների որոնման գործում:

Այնուհետև հյուրերին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց Մայր Աթոռում գումարված միջազգային համաժողովին ջուր Եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցության կապակցությամբ, նաեւ իր գնահատանքը փոխանցեց Հայաստանից և տարբեր երկրներից ժամանած զեկուցողներին Մայր Աթոռի հրավերն ընդունելու և իրենց փորձառությունը հաղորդելու համար:

Հանդիպմանը Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատեց, որ ազատությունն ու իրավունքը քրիստոնեական հավատքի մեջ կարեւորագույն ու հիմնարար արժեքներ են, սակայն փաստեց նաեւ, որ 21-րդ դարում արժեքային համակարգի վերաբերյալ ձեւավորվող ազատական գաղափարախոսություններն ու նոր մտայնությունները խեղաթյուրում են հասարակության ավանդական արժեքները և թիրախավորում քրիստոնեական արժեհամակարգը: Խոր մտահոգություն հայտնելով այդ երեւոյթի առնչությամբ՝ Հայոց Հայրապետը կարեւորեց Եկեղեցիների և քրիստոնյաների ջանքերի և հնարավորությունների համատեղումը կործանարար ազդեցություններից հասարակությունը և մասնավորապես ընտանիքները զերծ պահելու գործում: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ նման համաժողովները կնպաստեն հոգեւոր, բարոյական արժեհամակարգի ամուր պահպանմանը:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց նաեւ միջազգային համաժողովի կազմա-



կերպիչներին՝ ի դեմս Մայր Աթոռի դիվանապետ Արշակ Եսայ Խաչատրյանի:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց հյուրերի հարցերին, որոնք վերաբերում էին ժամանակակից մարտահրավերների հաղթահար-

ման միջոցներին, քրիստոնեական հոգեւոր և բարոյական արժեքներն այլափոխումներից զերծ պահելու ուղիներին, ինչպես նաեւ Հայոց Եկեղեցու կողմից հայ ընտանիքի ամրապնդմանն ու զորացմանն ուղղված ձեռնարկներին:

11 հոկտեմբերի

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի ներկայացուցիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի պաշտոնեականը՝ ուղեկցությամբ Պորտուգալիայում հիմնադրված Պորտուգալիա–Հայաստան բարեկամության միության նախագահ Վահե Մխիթարյանի:

Պարոն Վ. Մխիթարյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեղեկացրեց, որ այցը կազմակերպվել է Գալուստ Գյուլբենկյանի ծննդյան 150-ամյա

նագրվել նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Հիմնադրամի զորակցությամբ դեռեւս 1954 թվականին իրականացվեցին միաձնաէջ Մայր տաճարի վերանորոգման աշխատանքները, այնուհետև կառուցվեց Մայր Աթոռի վանատունը: Հետագա տարիներին հիմնադրամը նպաստել է նաեւ Գեորգյան հոգեւոր ծննդարանի գործունեությանը:

Հանդիպման ընթացքում Հայոց Հիմնադրամը խոսեց նաեւ Հայոց Եկեղեցու առաքելության և



հոբելյանին նվիրված «Պորտուգալիայի օրերը Հայաստանում» միջոցառումների շրջանակում, և հույս հայտնեց, որ այն կնպաստի Հայաստանի և Պորտուգալիայի միջև կապերի առավել սերտացմանը:

Հայրապետական իր օրհնությունը բերելով ներկաներին՝ Նորին Սրբությունը բարձր գնահատեց հիմնադրամի առաքելությունը և այն օգտաշատ աշխատանքը, որ հիմնադրամի ջանքերով իրականացվում է Հայաստանի և հայ ժողովրդի կյանքում:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ փաստեց, որ հիմնադրամի աջակցությամբ ժամանակին կարելի է ձեռքբերումներ են արձա-

քրիստոնեական հավատի դերի մասին հայ ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունն ընդգծեց, որ քրիստոնեական գործը հավատքի շնորհիվ է, որ հայ ժողովուրդը կարողացել է դիմագրավել իրեն բաժին հասած բոլոր փորձություններին: Ըստ Հայրապետի՝ այդպիսի հավատի կրող էր նաեւ ազգի հարազատ զավակ, բարեգործ Գալուստ Գյուլբենկյանը:

Հանդիպման Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ներկաների հարցերին՝ Հայ Առաքելական և Կաթոլիկ Եկեղեցիների փոխհարաբերությունների վերաբերյալ: Հիմնադրամի պաշտոնեականը Վեհափառ Հայրապետին հրավիրեց այցելել Պորտուգալիա:

«Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» ժառանգության՝ բարերար, բժիշկ Կարո Դերձակյանին

Սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շարագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն:

Հայաստանում բժշկության առաջընթացի ու զարգացման, մեծ վաստակի, հայրենամվեր, եկեղեցասեր ու ազգաշահ իրագործումների համար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշան հանձնվեց Մայր Աթոռի բարերար, բժիշկ Կարո Դերձակյանին (Կալիֆոռնիա, ԱՄՆ):

Ներկաներին ողջունեց Մայր Աթոռի դիվանատան Ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Պարույր քհն. Ավետիսյանը: Մեծարյալի կյանքին ու ազգանվեր գործունեությանն անդրադարձավ Մայր Աթոռի «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի ուղղորդիչի կլինիկայի ղեկավար, ՀՀ ուղղորդների ասոցիացիայի նախագահ, բ. գ. թ., դոցենտ Արթուր Գրաբսկին:

Այս «Էջ Միածինն ի Զօրե» շարականի երգեցողության ներքո բերվեց հայրապետական սրբատառ կոմպակը, որն ընթերցեց Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եսայ Բաբայանը:

Կոմպակում ի մասնավորի ասված է. «Մեծարգո պարոն Դերձակյան, գոհունակությամբ ենք անդրադառնում արժանավոր հայրորդու աստվածահաճո առաքելությանը, որ արդյունավոր



է բժշկության ոլորտում տասնամյակների ծառայության բարի արգասիքներով: Բժշկության լայն ասպարեզում մեծապես հայտնի է Ձեր անունը: Տարիներ շարունակ Դուք Ձեր կարողությունները ազնվորեն ծառայեցնում եք ապաքինման

ապահովում բժշկական կենտրոնի արդյունավոր գործունեությունը՝ խնամատարելու համար առողջության վերականգնման անհրաժեշտությունն ունեցող անձանց ապաքինման կարիքները»:

Կոմպակի հրապարակումից հետո Վեհափառ

Հայրապետը մեծարյալին հանձնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվով շքանշանը:

Այս շնորհակալական խոսք ասաց տիար Կարո Դերձակյանը՝ ընդգծելով, որ այս իրողությունը բժշկագիտության ոլորտում Հայաստան-Սփյուռք համագործակցության լավագույն ասպարեզներից է: Բարերարն ընդգծեց նաեւ, որ իրեն մշտապես հնարավորություն է ընձեռվել իր ջանքերը ներդնելու ի նպաստ Հայաստանում ուղղորդիչի զարգացմանը: Մեծարյալը երախտագիտություն հայտնեց Հայոց Հայրապետին իր անձի հանդեպ դրսևտրած ուշադրության և բարձր պատվի ու պարգևի արժանացնելու համար:

Այնուհետև երաժշտական կատարումներով հանդես եկան «Նոր անուններ» ծրագրի շնորհալի պատանիները:

Հանդիսությունն ամփոփվեց Նորին Սրբության օրհնությամբ խոսքով:

Վերջում իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները բերելով տեղ և տիկին Դերձակյաններին՝ Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը մաղթեց, որ բարձրյալն Աստված հանապազ պահի ու պահպանի Դերձակյան ընտանիքին իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո և շնորհի արեւշատություն, նորանոր հաջողություններ և երկնահեղ ամենայն բարիք: Նորին Սրբությունը հորդորեց շարունակել իրենց ազգասեր ու աստվածահաճո գործունեությունն ի փառս Աստծու և ի բարօրություն հայրենիքի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Կրոնները հանուն խաղաղության» համաժխարհային միության Պաշտպան Նախագահ

Ապրիլի 25-ին «Կրոնները հանուն խաղաղության» միջազգային միության ընտրյալ ընդհանուր քարտուղար պրոֆ. Ազգա Քարամը եւ գործող ընդհանուր քարտուղար հայր Կյոնի Սուգիմոն պաշտոնական գրության միջոցով են Ն. Ս. Օ. Ս. Տ. Քարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ օգոստոսի 20–23-ը Գերմանիայի Լինդաու քաղաքում տեղի ունեցած «Կրոնները հանուն խաղաղության» 10-րդ համաշխարհային համաժողովի ընթացքում Վեհափառ Հայրապետն առաջադրվել է աշխարհի 125 երկրներ եւ տարբեր կրոնական համայնքներ ներկայացնող 700 պատվիրակների կողմից ընտրվել է միության պատվավոր նախագահ:

«Կրոնները հանուն խաղաղության» համաշխարհային միությունը կազմված է տարբեր կրոնական առաջնորդների համաշխարհային խորհրդից, վեց տարածաշրջանային միջկրոնական մարմիններից եւ 90-ից ավելի ազգային մարմիններից, ինչպես նաեւ մի շարք միջկրոնական երիտասարդական միություններից՝ նպատակ ունենալով հանուն խաղաղության աշխարհի տարբեր կրոնական համայնքների արդյունավետ համագործակցության տեսլականով նպաստել դրանց միջեւ փոխգործակցության ձեւավորմանը, համաշխարհային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներում խաղաղության եւ համընդհանուր բարեկեցության հաստատմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սիրայում ծավալվող ռազմական գործողությունների մասին

Ն. Ս. Օ. Ս. Տ. Քարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոր մտահոգությունն է արտահայտել Սիրիայում տեղի ունեցող վերջին զարգացումների կապակցությամբ:

«Վերջին ժամերին տագնապալի լուրեր ենք ստանում Սիրիայի Արաբական Հանրապետության հյուսիս-արեւելքում Թուրքիայի կողմից իրականացվող ռազմական ներխուժման վերաբերյալ:

Համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից միջազգային հանրության ուշադրությունն ենք հրավիրում Թուրքիայի կողմից միջազգային կարգի ու օրենքի դեմ գործողությունների վրա՝ ակնկալելով հրատապ ու գործնական քայլեր՝ հետագա արյունահեղությունը կանխելու համար:

Փոքրամասնությունների՝ այդ թվում սիրիահայ մեր զավակների դեմ վերջիններիս ազգային ինքնության պատճառով Թուրքիայի կողմից հարձակումների վտանգը արթնացնում է նույն պետության կողմից 1915–23 թթ. իրագործված Հայոց ցեղասպանության մասին հուշերը եւ պետք է խստագույն դատապարտության արժանանա միջազգային հանրության կողմից:

Կիսելով ցավն ու տառապանքը պատերազմի արհավիրքը ապրող Սիրիայի բարեկամ ժողովրդի, մեր եղբայրների եւ քույրերի՝ աղոթք ենք բարձրացնում առ Աստված Սիրիայում եւ ողջ Մերձավոր Արեւելքում խաղաղության շուտափույթ վերահաստատման համար: Կատարվածը չունի որեւէ արդարացում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը պիտի շարունակի իր զորակցությունը բերել Սիրիայի ժողովրդին եւ մեր ազգի զավակներին», – ասված է Վեհափառ Հայրապետի խոսքում:

Մայր Աթոռում գումարվեց «Եկեղեցին եւ ընտանիքը 21-րդ դարում. արժեքներ եւ մարտահրավերներ» միջազգային համաժողովը



վարդապետությունը ձեւավորվել է աստվածադիր օրենքի համաձայն՝ հաստատելով ամուսնության սրբությունն ու արժեքը (Եբր. ԺԳ 4): Սուրբ Գիրքը հստակ ընդգծում է ամուսնության եւ ընտանիքի նվիրականությունն ու նպատակները: Աստված ստեղծեց մեր նախածնողներ Ադամին եւ Եվային այր ու կին (Ծննդ. Ա 28): Տղամարդու եւ կնոջ միության սրբագործությամբ Տերն ընտանիքը դարձրեց նվիրական օջախ, որի հարկից մերս արարչագործությունն է շարունակվում: Եկեղեցին Սուրբ Պատրիարքի խորհրդով օրհնում է ընտանիքի կազմությունը: Պատկառությամբ արարողությամբ հռչակվում է ընտանիքի անբաժանելի եւ անբակտելի միությունը, որը նվիրագործվում է աստվածային ներգործությամբ ու շնորհներով:

Ընտանիքի սրբության վերաբերյալ Եկեղեցու պատգամը մենք կարիքն ունենք հասցնելու յուրաքանչյուր անհատի սրտին եւ մտքին: Ընտանիքը Աստծո օրհնությունն է եւ հիմքն ու մանրակերտը հասարակության, մարդկային ազնիվ ու վեհ հարաբերությունների: Ընտանիքը յուրօրինակ եկեղեցի է, որի հարկից մերս ծնողների սպասավորությամբ սկիզբ է առնում աստվածանաչողության, տերունական պատգամների, օրինապահության, սիրո, նվիրվածության ճանապարհը: Ընտանեկան հոգածու միջա-

թյան ու զորացման ուղղությամբ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իրականացնում է մի շարք սոցիալական ծրագրեր: Մայր Աթոռի Միաբանական ժողովի մասնակիցներն այցելել են Հայաստանի տարբեր շրջաններում ապրող կարիքավոր ընտանիքներին՝ բերելով իրենց օրհնությունն ու Եկեղեցու նյութական աջակցությունը: Մենք նույնպես Մեր հանդիպումներում, Մեր քարոզներում ու խոսքերում անդրադառնում ենք ընտանեկան խնդիրներին: Առաջիկա ամիսներին ծրագրում ենք նոր հանդիպումներ, հատկապես՝ բազմազավակ ընտանիքների հետ: Այս ծրագրերը շարունակական են, որոնց ընթացքը պիտի նշանավորվի ամավերջին՝ ընտանիքների օրհնության հատուկ արարողությամբ:

Մեր մաղթանքն է, որ միջազգային այս համաժողովը՝ զուսմարված «Եկեղեցին եւ ընտանիքը 21-րդ դարում. արժեքներ եւ մարտահրավերներ» խորագրով, իր նպաստը բերի հասարակության մեջ ընտանիքի նվիրագործված ընկալման զորացմանը: Վերստին Մեր օրհնությունն ու զմահատանքը բերելով համաժողովի կազմակերպիչներին եւ բանախոսներին՝ աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ օրհնի մեր այս համաժողովը, Սուրբ Հոգու շնորհներով առաջնորդի մեզ եւ արդյունավորի ընտանիքների ամրապնդմանն ու անխաթար պահպանմանն ուղղված ջանքերը:

Բարի ընթացք համաժողովի աշխատանքներին: Թող մեր Տիրոջ շնորհները, սերն ու խաղաղությունը լինեն ողջ աշխարհի եւ մարդկության հետ այսօր եւ միշտ. ամեն», – ասաց Վեհափառ Հայրապետը:

Համաժողովին «Քրիստոնեական ընտա-

Նոկտեմբերի 9-ին, Ընտանիքի տարվա շրջանակներում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, օրհնությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Քարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, իր աշխատանքն սկսեց «Եկեղեցին եւ ընտանիքը 21-րդ դարում. արժեքներ եւ մարտահրավերներ» խորագրով միջազգային համաժողովը:

Համաժողովին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, պետական այրեր, գիտնականներ եւ հասարակական գործիչներ Հայաստանից, Ռուսաստանից, Իռլանդիայից, Ավստրիայից, Բելգիայից եւ Ֆինլանդիայից:

Համաժողովն սկսվեց «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում՝ Տերունական աղոթքով, որից հետո ներկայներին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ, համաժողովի կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ Արշակ Եպս Խաչատրյանը:

«Ակնհայտ է, որ ընտանիքը առանցքային նշանակություն ունի Եկեղեցու առաքելության մեջ: Չորացնել քրիստոնեական ընտանիքները նշանակում է ամրացնել Եկեղեցու հիմքերը եւ կենսագործել հզոր հայրենիքի ու բարոյապես առողջ ու կենսունակ հասարակություն կերտելու տեսիլքը», – ընդգծեց Արշակ Եպս:

Այնուհետեւ համաժողովի մասնակիցներին իր հայրապետական օրհնությունն ու պատգամը փոխանցեց Նորին Սրբություն Քարեգին երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Գերաշնորհ, հոգեշնորհ, արժանապատիվ հայրեր,

Մեծահարգ տիարք եւ տիկնայք, Սիրելի ներկայներ,

Ողջունում ենք ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ բերում հայրապետական Մեր օրհնությունը: Ուրախ ենք այս ժողովին ձեր մասնակցության համար: Այսօրինակ համաժողովները, հավատում ենք, կարելու նպաստ են բերելու ընտանիքի առջեւ ծառացած մարտահրավերների դիմագրավման եւ հոգեւոր ու բարոյական արժեհամակարգի անաղարտ պահպանության ու ամրապնդման գործում: Մեր գնահատանքն ենք բերում Ռուս Ուղղափառ եւ Կաթոլիկ Եկեղեցիների ներկայացուցիչներին, որոնք ընտանիքների հետ հովվական աշխատանքի իրենց փորձառությունը պիտի կիսեն մեզ հետ:

Արդի աշխարհում վտանգվում են ընտանիքի եւ նրա առաքելության մասին ընկալումները: Տարածում են գտնում ընտանիքի նվիրական գաղափարը աղճատող եզրույթներ եւ հասկացություններ, որոնք ներկայացվում են իբրեւ ժամանակակից կյանքի թելադրանքներ: Ստայնության ու բարքերի այսօրինակ այլափոխումը հաճախ քողարկվում է անհատի ազատության եւ իրավունքների լույսի ներքո՝ խեղաթյուրելով ընտանեկան կյանքի իրական արժեքն ու բացառիկությունը:

Եկեղեցու տեսակետները ընտանիքի վերաբերյալ հիմնված են ոչ թե մարդկային փոփոխվող կենսակերպի եւ մտայնությունների, այլ Աստծո կենարար խոսքի ու հայտնության վրա: Ընտանիքի մասին քրիստոնեական



վայրում է հասակ առնում երեխան, եւ նրա մտքում ու հոգում ձեւավորվում է հասարակության անդամ լինելու գիտակցությունը: Ընտանիքի աստվածահաստատ պատկերի խաթարմանը խախտվում է երեխայի իրավունքը՝ մեծանալու իր իր ու մոր սիրո ու դաստիարակության ներքո, նմանությամբ ավետարանական օրհմյալ ու նվիրական Սուրբ Ընտանիքի:

Ներկա ժամանակների լրջագույն մտահոգություններից է նաեւ ընտանիքների քայքայումը, ամուսնալուծությունը, որը զգալի թիվ է կազմում աշխարհում, ներառյալ մեր երկրում՝ Հայաստանում: Անհանգստացնող այս իրողության պատճառները տարբեր են՝ սոցիալական, տնտեսական, բարոյական, նաեւ տեխնոլոգիաներից կախվածությունը, որը վնասում է ընտանիքում միջանձնական հարաբերություններին: Այս մարտահրավերների համատեքստում Մենք կարեւորում ենք համագործակցությունը պետության հետ՝ ի նպաստ ընտանիքների պահպանման ու ամրապնդման եւ առկա սպառնալիքների կանխարգելման: Հիրավի, ամուր եւ քրիստոնեական արժեհամակարգ կրող ընտանիքը նշանակում է երկրի, պետության երաշխավորված ապագա:

Ընտանիքի առջեւ ծառացած հիմնախնդիրները վեր հանելու, անդրադարձ կատարելու եւ հաղթահարելու տեսլականով Մենք 2019 թվականը հռչակեցինք Ընտանիքի տարի, որպեսզի այդ առումով իրագործվեն առավել նպատակային քայլեր ու նախաձեռնություններ: Մեր Սուրբ Եկեղեցու հովիվները համայնքներում գնահատելի սպասավորություն են մատուցում ընտանիքների ամրու-

նիք եւ ժամանակակից մարտահրավերներ» եւ «Եկեղեցու եւ պետության դերը քրիստոնեական ընտանիքի պահպանության եւ զորացման մեջ» թեմատիկ բաժանմամբ միաստեղծ բանախոսություններով հանդես եկան Մայր Աթոռի դիվանապետ Արշակ Եպս Խաչատրյանը («Ամուսնություն. միություն, թե՛ համակցություն»), Վլադիկովկասի եւ Վանիայի արքեպիսկոպոս, Հայաստանի Հանրապետությունում Ռուս Ուղղափառ Եկեղեցու համայնքների կառավարիչ Լեոնիդ արք. Գորբաչովը («Եկեղեցին եւ ընտանիքը 21-րդ դարում. արժեքներ եւ մարտահրավերներ» միջազգային համաժողովի առիթով), Իռլանդիայի Լիմերիկի եպիսկոպոս, Գրիգորյան համալսարանի դասախոս, ա. գ. դ. Բրենդան Եպիսկոպոս Լեհին (««Դուրից 2018 ընտանիքների համաշխարհային ժողով»): Ընտանիքներին տրամադրված աջակցությունը արժեքների եւ ավանդույթների փոփոխվող աշխարհում», Ավստրիայի Գրացի համալսարանի դասախոս, պ. գ. դ. Մարտին Կուզլերը («Ամուսնությունն ու ընտանիքը եվրոպայում եւ Հայաստանում. մարտահրավերներ քրիստոնյաների համար այսօրվա հանրային քննարկումներում»), Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի դասախոս, ՌԴ ԳԱ թղթակից անդամ, ս. գ. դ., պրոֆեսոր Ժան Տոչչենկոն («Ժամանակակից ընտանիքի պարադոքսները. Հույսեր եւ իրականություն»), ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ իրավունքի ինստիտուտի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ս. գ. դ., պրոֆեսոր Գեորգ Պողոսյանը («Հայկական ընտանիքը դարաշրջանների շրջադարձին»):

Շարունակությունը՝ էջ 4

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը «Եկեղեցին եւ ընսանիքը 21-րդ դարում. արժեքներ եւ մարտահրավերներ» միջազգային համաժողովի մասնակիցների հետ համաժողով արդիւթի ընթացքում



Ընտանիքի տարվա շրջանակներում, հոկտեմբերի 9-ից 10-ը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած «Եկեղեցին եւ ընտանիքը 21-րդ դարում. արժեքներ եւ մարտահրավերներ» միջազգային համաժողովի առիթով հոկտեմբերի 10-ին Սուրբ Գայանե վանքում, համդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց համատեղ արդրոքի արարողություն՝ ընտանիքների զորացման եւ ընտանեկան սրբազան արժեքների պահպանման համար:

Սրբազան արարողությանը ներկա էին քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, միջազգային համաժողովի մասնակիցները, Մայր Աթոռ ժամանած բազմազավակ ընտանիքներ եւ բարեպաշտ այլ ուխտավորներ:

Աղոթքից հետո ներկա ժողովողին իր հայրապետական պատգամն ու օրհնությունը բերեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Միջազգային գիտաժողովի մեծարգո մասնակիցներ,

Սիրելի հավատավոր զավակներ մեր, Հոգեւոր գոհունակությամբ ենք ողջունում ձեզ ամենքիդ Սուրբ Գայանե եկեղեցում՝ միջազգային գիտաժողովի շրջանակներում կատարվող միասնական աղոթքի այս պահին: Աղոթեցինք մեր ամենակալ Հորը՝ ընտանիքի ու ընտանեկան սիրո զորացման, ընտանեկան սրբազան արժեքների պահպանման եւ ծառացող նորանոր մարտահրավերների հաղթահարման համար: Հեշտ չէ սրբազան ու անանց հոգեւոր արժեքների հարաբերականացման

մտայնությամբ կլանված արդի աշխարհում պայքարել նվիրական ու անձեռնմխելի այնպիսի արժեքի եղծման դեմ, ինչպիսին մեզ՝ քրիստոնյաներիս համար ընտանիքն է: Սակայն եկեղեցու առաքելությունն է քրիստոնեական ընտանիքի զորացումն ու ամրապնդումը, եկեղեցին է այն գրավականն ու հիմքը, որի վրա անխախտորեն հիմնվում է քրիստոնեական ընտանիքի աստվածապարզեւ գաղափարը: Այս ճանապարհին մենք հաջողելու ենք միայն ու միայն մեր Տիրոջ զորացնող ներկայությամբ ու կենարար խոսքով. «Մի վախեցիր, այլ միայն հավատա» (Մարկ. Ե 36):

Քրիստոնեական ընտանիքը՝ իբրեւ աստվածահաստատ իրողություն, այսօր արդեն բոլոր քրիստոնյաներին միավորող կարեւորագույն հասկացություն է, խորհրդանշական կերպով՝ Աստծո՝ երկնավոր մեր Հոր համամարդկային ընտանիքի արտացոլումը մեր կյանքում եւ մեր հասարակության մեջ: Այս առումով այն նաեւ ամենքիս պաշտպանության եւ խնամքի կարիքն ունի՝ իբրեւ հոգեւոր արժեքների ու բարոյական սկզբունքների կերտման դարբնոց, ավետարանական ճշմարտությունները կյանքի կոչելու նվիրական ճանապարհ: Պատահական չէ, որ քրիստոնեության արշալույսին հեթանոսաց առաքյալ Սուրբ Պողոսն ընտանիքի ու ընտանեկան արժեքների ուրացումն ուղղակիորեն համարժեք էր համարում հավատությանը. «Իսկ եթե մեկը յուրայիններին եւ մանավանդ ընտանիքին խնամք չի տանում, հավատն ուրացել է եւ ավելի չար է, քան անհավատը» (Ս Տիմոթ. Ե 8): Հիմալի, անկարելի է ընկալել քրիստոնեությունն ու Քրիստոսի եկեղեցին առանց ընտանիքի եւ ընտանեկան արժեքների, որոնց հիմքն աստվածային գերագույն առաքինությունն է՝ սերը, գոյության գրավականը՝ հավատը, ներշնչող խնամքը՝

հույսը: Քրիստոնեական առաջին համայնքները ստեղծվել են ընտանիքներում, ընտանեկան սեղանի շուրջ են առաջին քրիստոնյաները մատուցել առաջին Սուրբ Պատարագները, ընտանեկան օջախներում են սերմանվել երկնավոր մեր Վարդապետի փրկչական պատգամի սերմերը՝ ծլարձակելով ու հզոր արմատներով տարածվելով իբրեւ քրիստոնեական մեծ ու միասնական ընտանեկան ծառ:

Սիրելիներ, Տիրոջից ամենքս պատգամ ունենք՝ նախանձախնդիր մնալու նվիրականությանն ու ամրությանն ընտանիքի, անխաթար պահպանելու աստվածահաստատ ընտանիք հասկացությունը, նրա սրբությունը, ազգային ավանդույթները, խնամելու ու բարձրացնելու մեր հոգեւոր ու ազգային կյանքը՝ մշտապես մնալով Տիրոջ որդեգրության շնորհի մեջ՝ որպես հավատավոր մեկ ընտանիք, որպես Աստծո սեփական ժողովուրդ:

Ի խորոց սրտի աղոթում ենք, որ ամենակալ Աստված Իր խնամքի ու սիրո մեջ պահի ու պահպանի ընտանիքները եւ ողջ աշխարհին, համայն մարդկությանը շնորհի Իր երկնառաք խաղաղությունը, զթությունն ու ողորմությունը այսօր եւ միշտ. ամեն:

Մայր Աթոռում գումարվեց «Եկեղեցին եւ ընսանիքը 21-րդ դարում. արժեքներ եւ մարտահրավերներ» միջազգային համաժողովը



Սկիզբը՝ էջ 3

Ընդմիջումից հետո համաժողովը շարունակեց իր աշխատանքը: Զեկույցներ ներկայացրեցին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ, ի. գ. թ. Արա Զոհրաբյանը («Ընտանիքը որպես սահմանադրական ինստիտուտ եւ ազգային արժեք»), Գեորգյան հոգեւոր ճեմարանի դասախոս Ադամ քնն. Մակարյանը («Ընտանիքը քրիստոնեական ընկալման եւ արդի գաղափարախոսությունների ու մարտահրավերների առջեւ»), «Ծնողական համառոտական դիմադրություն» ընտանիքի պաշտպանության համառոտական հասարակական կազմակերպության ղեկավար Մարիա Մամիկոնյանը (««Գլոբալիզմի» մար-

տահրավերը ընտանիքի եւ քրիստոնեական մշակույթի ինստիտուտի առջեւ: Պատասխան կլինի»), «Հանուն քրիստոնեական ընտանիքի» նախաձեռնության ղեկավար, պ. գ. թ. Կարինե Եսայանը («Իրավական եւ քաղաքական ոլորտներում քրիստոնեական ընտանիքի եւ ազգային-հոգեւոր արժեքների պաշտպանությանը»), Ֆինլանդիայի Հելսինկիի համալսարանի դասախոս, ք. գ. դ. Յոհան Բեկմանը («Ընտանիքը որպես այսօրվա լիբերալ արժեքների քրեական առանձնահատկություն») եւ իրավախորհրդատու, «Ազատության պաշտպանության» դաշինքի անդամ, ի. գ. դ. Ադինա Պորտարուն («Ամուսնությանն ու ընտանիքին

ուղղված ժամանակակից իրավաբանական եւ քաղաքականության մարտահրավերները»):

Քրիստոնեական ընտանիքի մոդելի պահպանումը ու տարածումը եւ ընտանիքի նկատմամբ հոգեւոր խնամատարության իրագործումը առանցքային կարեւորություն ունեն եկեղեցու առաքելության մեջ: Ըստ այսմ՝ համաժողովը 21-րդ դարի պահանջների ու մարտահրավերների հաշվառմամբ անդրադարձավ ընտանիքի եւ քրիստոնեական արժեքների վերաբերյալ հասարակական լայն ընկալումներին ու դրանց խորքային խնդիրներին՝ խնդրո առարկա նյութերն ամփոփելով թեմատիկ հետեւյալ բաժանումներում՝ «Քրիստոնեական ընտանիք եւ ժամանակակից մարտահրավերներ», «Եկեղեցու եւ պետության դերը քրիստոնեական ընտանիքի պահպանության եւ զորացման մեջ»:

Միջազգային համաժողովի մասնակիցներն իրենց դիտարկումների ու քննարկումների արդյունքում հանգեցին հետեւյալ ընդհանրացումներին եւ ամփոփումներին.

1. Ընտանիքը, քրիստոնեական ընկալման համաձայն, անխախտելիորեն եւ անհրաժեշտաբար խառնվում է Աստվածաշնչում Աստծո կողմից տրված հայտնության եւ պատգամի վրա (ԾՃՆդ. Ա 28, Մատթ. ԺԹ 1-12, Դուկ. ԺԶ 18, Մարկ. Ժ 6-9): Ընտանիքի եւ ընտանեկան հարաբերությունների քրիստոնեական ընկալման հիմքում ընկած են ոչ թե պատմամշակութային գործոններ, մարդկային գաղափարախոսություններ ու սկզբունքներ, այլ աստվածային ճշմարիտ հայտնությունը: Ըստ այսմ՝ ընտանիքը տղամարդու եւ կնոջ նվիրագործված միությունն է, ուր «Ես»-ի հաղթահարման միջոցով ձեւավորվում է ամուսինների որպես մեկ դառնալու՝ «եւ երկուսը մեկ

մարմին պիտի լինեն» (Մարկ. Ժ 9) տերունապատվեր պատգամը: Ընտանիքը, որպես սոցիալական ինստիտուտ, նվիրագործված աստվածային ուղերձով, կոչված է մարդկային սերնդի բնականոն աճի ու կատարելագործման համար՝ «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը եւ տիրե՛ք դրան» (ԾՃՆդ. Ա 28):

2. Ժամանակակից աշխարհում ընթացող գլոբալացման գործընթացները լուրջ մարտահրավերներ են ստեղծում ժողովուրդների արժեքա-մակարգերի՝ այդ թվում ընտանեկան արժեքների պահպանման առջեւ՝ վտանգելով դրանց գոյությունը եւ կամ ենթարկելով ձեւախեղումների: Այս համատեքստում ծայր եւ առնում քրիստոնեական ուղղափառ ընկալումներին անհամատեղելի դրսեւորումներ, որոնք ամուսնությունը զրկում են տղամարդու եւ կնոջ ամբողջական եւ անբաժանելի միության բովանդակությունից ու իմաստից՝ պատճառ դառնալով ընտանիքների քայքայման:

3. 21-րդ դարում ընտանիքի էության եւ գործառույթների ստեղծված ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ է մեկտեղել ընտանեկան արժեքների պահպանմանն ու հասարակության հոգեւոր դաստիարակությանն ուղղված եկեղեցու եւ պետության ջանքերը: Արդի պահանջների ու մարտահրավերների հաշվառմամբ անհրաժեշտ է գտնել հավասարակշռված եւ գործունե լուծումներ՝ վերախմաստավորելու եկեղեցու եւ հոգեւորականի դերը քրիստոնեական ընտանիքի ամրապնդման, հասարակության հոգեւոր սննդի ապահովման ու դաստիարակության գործում:

Հոկտեմբերի 10-ին համաժողովի մասնակիցներն այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Հայրադեական սուրբ Պատարագ Ժնեւի Սուրբ Հակոբ Եկեղեցու 50-ամյակի առիթով

Նոկտեմբերի 12-ին Ն. Ս. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժամանեց Ժնեւ (Շվեյցարիա)։ Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Արեւմտյան

տարեցների եւ հաշմանդամություն ունեցող անձանց խմամբին։

Հոկտեմբերի 13-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը սուրբ Պատարագ մատուցեց Ժնեւի Սուրբ Հակոբ հայկական եկեղեցում՝ ազդա-

Մայր Աթոռի բարերարներ, ուխտավոր հայորդիներ, ինչպէս նաեւ Համբարձի Ուղղափառ Եկեղեցուց հայր Ռադի Բուշին, Կաթողիկ Եկեղեցու թեմից կանոնադրական խմամբի խորհրդի նախագահ Քաթրին Ռիդլիգերը, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղարի ներկայացուցիչներ հայր Իոան Սոկան եւ դոկտ. Անի Ղազարյանը, Սոսա-Թոլուանե բողոքական համայնքի ներկայացուցիչներ Ռոլանդ Վեբերը եւ Վերոնիկ Հոպֆեր-Օրելին եւ Ժնեւի հրեական համայնքի գլխավոր ընթացիկ դոկտ. Իսահակ Դալանը։

Սուրբ Պատարագի ընթացքում, իբրեւ բնաբան ընտրելով Ա. Տիմ. Գ 15-ի՝ «Կենդանի Աստուծո Եկեղեցին է սյուն եւ հաստատություն ճշմարտության» խոսքը, Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական պատգամը բերեց ներկա ժողովրդին։

«Փառք ենք վերադառնում Բարձրալին, որ շնորհին է պարգեւէլ հովվապետական այց կատարելու Շվեյցարիա, հանդիպելու ձեզ այս գեղատեսիլ վայրում՝ Լեմանի լճի ափին, եւ մեր Սուրբ Եկեղեցու հավատավոր զավակներից հետ միասին տոնախմբելու Սուրբ Հակոբ Եկեղեցու 50-ամյակը։ Շվեյցարիայի օրինյալ հողում քսաներորդ դարասկզբից մեր ժողովրդի զավակներ ապրել են՝ մշտապես վառ պահելով հայրենիքի հանդէպ սերը եւ հայ քրիստոնեական իրենց ինքնությունը, որի վկայությունն ու պատկեր է 1969 թ. երջանակահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությանը եւ լուսահոգի Հակոբ Թոփալյան ազնվահոգի բարերարի ջանքերով կառուցված այս գեղեցիկ եկեղեցին։ Աղոթքով ենք հիշում համագուցալ բարերարին եւ ի պայծառություն եկեղեցու իրենց ջանքերը ներդրած բոլոր երախտավորներին։ Եկեղեցու հորեղանը մեն իրադարձություն է ամենքիս համար։ Ուրախալի այս առիթով բերում ենք ձեզ հայրապետական Սեր օրհնությունն ու շնորհավորանքները եւ համայն հայության մվիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լույսն ու օրհնությունը»,- մշեց Վեհափառ Հայրապետը։

Քրիստոսի պարգեւած ճշմարտության հավատքով զորացած՝ աշխարհով մեկ եկեղեցիներ հիմնեցինք՝ հնչեց աղոթքը, հնչեց հայ լեզուն ու խոսքը, վառ մնաց ջախջախականության ու եկեղեցասիրության։ Մենք մարդկային պատմության անդաստանում թողեցինք առ Քրիստոս հավատքով կերտված ազգային կյանքի, արժանահիշատակ գործերի վառ վկայությունները եւ աստվածաշատության հաստատունն ու ճշմարիտ մեր՝ հայկական սյունները՝ հոգեւոր եւ ազգային անգին գանձերը, որոնցից մեկը Սուրբ Հակոբ անունը կրող այս եկեղեցին է»,- ասաց Նորին Սրբությունը։

Վեհափառ Հայրապետը խոսեց նաեւ Շվեյցարիայի հայության կյանքում Սուրբ Հակոբ եկեղեցու կենդանի ծառայության մասին։ «Գոհունակություն է Մեզ համար անդրադառնալ, որ կեն դար Սուրբ Հակոբ եկեղեցին հոգեւոր սպասավորների եւ նրանց լծակից աշխարհականների գովելի ծառայությամբ հոգեւոր խմամբ է մատուցել Շվեյցարիայում հաստատված հայորդիներին, զորացրել ու առաջնորդել դեպի Աստված, բաշխել Սուրբ Հոգու պարգեւները եւ ամուր պահել ազգային ինքնությունը։ Համայնքային կյանքում ծագած դժվարություններն ու անհամաձայնությունները ձեր հայրերը եւ դուք հաղթահարել եք ազգային միասնության գիտակցությամբ եւ առ մեր Սուրբ Եկեղեցին սիրող ու հավատարմության ոգով։ Մենք քաջալերում ու հուսալուծ ենք ձեր հավատավոր բարի ընթացքով ու աստվածահաճո գործերով։ Ձեր ձեռքբերումները դուք ծառայեցնում եք ոչ միայն շվեյցարահայ համայնքի բարգավաճմանը, այլեւ մեր Սուրբ Եկեղեցու առաքելության արդյունավորմանը, մեր անկախ հայրենիքի, ազատ Արցախի զորացմանը։ Քրիստոնեական արժեքներին հավատարմությամբ դուք նաեւ Շվեյցարիայի բարի ու վստահելի քաղաքացիներն եք՝ մասնակից ազնվադաստ այս երկրի հասարակական կյանքի առաջընթացին։ Շվեյցարիայի «Կարմիր խաչի» կողմից կազմակերպված երեկ-



Եվրոպայի հայրապետական պատվիրակ եւ Վատիկանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Խաժակ արք. Պարսամյանը, Շվեյցարիայի Համադաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանը, Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Գուսան վրդ. Ալեանյանը եւ Ժնեւի Սուրբ Հակոբ եկեղեցու վարչության ատենապետ Վիգեն Վարձայետը։

Նույն օրը Գարեգին Երկրորդ Հայրապետը պատվիրակության ուղեկցությամբ ներկա գտնվեց «Կարմիր խաչի» եւ Ժնեւյան «Կարմիր խաչի» ջանքերով կազմակերպված Շվեյցարիայի «Կարմիր խաչի» 2019 թ. բա-

րարելով եկեղեցու կառուցման 50-ամյակին նվիրված միջոցառումների մեկնարկը եւ իր բարձր ներկայությամբ խանդավառություն հաղորդելով հայ համայնքին։ Այս առիթով եկեղեցում էին հավաքվել շվեյցարահայ համայնքի բազում ներկայացուցիչներ։

Հայրապետական Պատարագն սկսվեց հանդիսավոր թափուրով, որի ընթացքում ժողովուրդն արժանացավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնությանը։ Որպես առընթերականներ՝ Վեհափառ Հայրապետին սպասավորեցին Խաժակ արքեպիսկոպոսը եւ Գուսան վարդապետը։

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին Շվեյցարիայի քաղաքային իշխա-



րեգործական հանդեսին։ Այս տարի «Պայծառացրեք մեր տարեցների կյանքը» նշանաբանով անցկացված հանդեսի ընթացքում հավաքագրված միջոցները նպատակաուղղվելու են նաեւ Հայաստանում կարիքավոր

մուկան ներկայացուցիչներ, ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը, Շվեյցարիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանը, Շվեյցարիայի տարբեր համայնքների վարչությունների անդամներ,

Նորին Սրբությունն իր քարոզում անդրադարձավ տաճարի խորհրդին եւ առաքելությանը յուրաքանչյուր հավատացյալի կյանքում։ «Սուրբ է Տիրոջ տաճարը, որտեղ երկնառաք բարիքներով լիանում են հավատացյալների հոգիները, բավականանում մխիթարությամբ, սփոփվում աստվածային ողորմությամբ, առատանում Սուրբ Հոգու շնորհներով։ Սուրբ Պողոս առաքյալը հենց այս նվիրական ու տերունավանդ առաքելությունն է շեշտում՝ կենդանի Աստուծո Եկեղեցին բնորոշելով իբրեւ ճշմարտության հաստատուն եւ սյուն։ Հավատացյալներիս համար Եկեղեցին դեպի Աստված եւ փրկություն առաջնորդող տապալ է, որ այս կյանքի պեղծություններին, անհանգստություններին ու տագնապների միջից իր հարկի ներքո ապաստանածներին սնում է հոգեւոր կերակուրով, մատուցակում Տիրոջ կենաց խոսքը եւ ապահով հասցնում դեպի փրկության խաղաղ նավահանգիստը։

վա հանդեսը՝ ի նպաստ կարիքի մեջ գտնվող մեր հայրենակիցների, վառ վկայությունն էր այն կարեւոր ավանդի, որ հայ համայնքն ունի հաշի Շվեյցարիայի իշխանությունների եւ հասարակության։ Այս առիթով բերում ենք ձեզ ամենքիդ մեր բարձր գնահատանքն ու օրհնությունը։

Սիրելի բարեպաշտ զավակներ Սեր, գոհունակություն է հայոց Հայրապետիս համար, որ դուք ձեր բաժին լույսն եք հավելում Սուրբ Էջմիածնի լուսավորչափաստատ մշտավառ կանթեղին, որ դարերի խորքից մինչեւ այսօր լուսավորում է ազգիս փրկության ճանապարհը։ Հայրապետական Սեր հորդորն է ձեզ, որ ձեր հայրերի օրհնակով, սիրո եւ միաբանության ոգով մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքո շարունակեք կենդանի պահել ազգային-եկեղեցական ձեր կյանքը՝ երիտասարդ սերունդին կրթելով եւ դաստիարակելով ազգասիրության ոգով։

Հարունակությունը՝ էջ 6

Միրահար աստղերի գրույցը

1946 թ. ապրիլի 20-ին գրած ինքնակենսագրության մեջ, անդրադառնալով մանկության տարիներին, Իսահակյանը խոստովանում է, որ վաղ հասակից իր պոեզիան գուցենքանում է ժողովրդական բանահյուսության հետ եւ սկզբից եւեթ սնվել է նրա ակունքից։ «Սիրում էի գյուղական միջավայրը. յայլա գնալը, հովվությունը, ժողովրդական երգերը, թափառական գուսաններին, որոնց նմանությունս 11–12 տարեկանից սկսել եմ ուսանավորներ գրել» (Գ. Ն. Հովնան, Ավետիք Իսահակյան, եր., 1976, էջ 81–82)։

Պատմահայր Մովսես Խորենացին ավանդապահ Շիրակի բանահյուսության ամբարների մասին վկայում է դեռեւս V դարից՝ մեզ փոխանցելով ժողովրդական արամիտ իմաստությունը շատակեր Շարայի անհագուրդ ախորժակի եւ Շիրակի ամբարների անհատնում բերք ու բարիքի մասին։ Շիրակն իր հյութեղ բառ ու բանով, խոսքաշեն ու սրամիտ մարդկանցով, գրույց-ավանդություններով եղել է Իսահակյանի բանաստեղծական օրրանը, եւ ի նշան երախտագիտության՝ նա հայրենի Շիրակն անվանել է *մերթ հայկական բոլոր հատվածների ժամադրակայր, մերթ տիեզերքի կենտրոն*։

Ժողովրդական-գեղջկական երգի մասին Իսահակյանի ունեցած ամենավաղ պատկերացումներն էլ աղերսվել, անգամ նույնացվել են Շիրակի բնության ու բնաշխարհի բանաստեղծական ընկալման հետ։ «Իմ մանկության ժամանակ, 80-ական թվականներին, երբ հայերենից բացի գրեթե ուրիշ լեզու չգիտեի – խորին տպավորություն է թողել իմ վրա մեր ժողովրդի երգը, գեղջկական երգը, այն որ Շիրակի ցորեն արտերի հետ ծփում է, ծաղիկների հետ բուրում, ամեն տարի նոր ու նոր,

եւ Ախուրյանի ալիքների հետ կարկաչում» (Ավ. Իսահակյան. *Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 6 (Նամակներ), եր., 1979, էջ 333*)։

Բանաստեղծի վաղ պատանեկան ձեռագրերը մեզ ավանդում են մի բավական հարթ ու սահուն ոտանավոր՝ գրված 1890 թվի նույնների 3-ին ձեռնարանում եւ նվիրված հայրենի Շիրակին, որ երկու օրաչափի հեռու էր էջմիածնից – ինչ անենք, թե սայլի ընթացքով՝ ժամանակի ընթացքն էր այդպես։

*Կուզեն տեսնել ջինջ, թռչնալից
Երկնականար կապուտակ,
Անուշ գետեր, զով ձկնալից –
– Գնա՛ շուտով իմ Շիրակի:
Կուզեն տեսնել սրբանվեր
Վանք-վանորայք ավերակ,
Կոթրո՛ղ, արձան, սուրբ շիրիմներ
– Գնա՛ շուտով իմ Շիրակ...:*

Եվ այդ տիեզերքի կենտրոնը՝ Շիրակը, ինքն էլ ուներ իր կենտրոնը։ Դա հիմնավորց Կումայրիի եր, նորակոչ Ալեքսանդրապոլ՝ արհեստավորների ու գուսանների քաղաքը։ «Ալեքսանդրապոլ աշուղների քաղաք էր համարվում,– հիշում է Վարպետը։– Ես իմ պատանեկության ժամանակ հաշվում էի երեսուցի չափ աշուղներ եւ ժողովրդական երգիչներ (երգահաններ), որոնք անում ունեին հայրենի քաղաքում եւ հայրենի քաղաքից դուրս /.../ Նրանք իրենց երգերով ու նվագով զարդարում էին ալեքսանդրապոլցիների նշանդրեքների ու հարսանիքների հանդեսները, տոնական խնջույքները եւ քեֆերը։ Աշուղ-երգիչների խմբակներն իրենց սրճարանն ունեին, ուր օրվա որոշ պահերին երգում էին ու նվագում։

Կային նշանավոր սրճարաններ, ուր պարբերաբար հավաքվում էին տեղացի եւ դրսից եկած աշուղ-երգիչները՝ իրար հետ մրցելու, հետաքրքրվող հանդիսականների ներկայությամբ» (Ավ. Իսահակյան. *Արվեստի մասին, եր., 1977, էջ 94*)։

Դեռատի հասակից Իսահակյանը շատ է շրջել Շիրակում եւ Հայաստանի մյուս վայրերում. եղել Անիում, Իզդիրում, Ապարանում, Կարսում, Դիլիջանում եւ այլուր, զննել ու քննել ժողովրդի կենցաղն ու բարքերը, այցելել պատմական վանքերն ու ուխտավայրերը։ Իրենց ավանդական տոներով հնուց ի վեր Շիրակում հռչակված էին Խծկոնքի, Հառիճա, Մարմաշենի եւ Արգինայի վանքերը։ Այդ տոնախմբությունների ժամանակ պատանի Ավետիքը գրի է առել ժողովրդական խաղեր ու գրույցներ. «Երեկ գրեցի, այսինքն գրի առա բավական ժողովրդական «մանի, յայլի, ջան-գյուլում»-ներ. ես շատ եմ սիրում այդ պարապմունքը» (Ավ. Իսահակյան. *Հիշատակարան, եր., 1977, էջ 42*),– խոստովանում է նա 1893 թ. ապրիլի 2-ին։ Այստեղ մանկության ու պատանության տարիներին լսած գրույցներն ու ավանդությունները ներշնչանքի անհատնում ակունք են եղել նրա համար ողջ կյանքում։ Բանաստեղծի հուշերում մշտապես վառ է մնացել քաղցրալուր նվագարանը ձեռքին գուսանը՝ իր երգ ու պատումով, եւ մի անգամ չէ, որ բանաստեղծական ներշնչման պահերին նա աչքի առաջ է բերել այդ հուշապատկերը. «Կամաջ ծառի տակ նստել էր մի գուսան՝ կրծքին գրկած մի սագ, որը միայն մի լար ուներ, մի քնքուշ լար /.../ Գուսանը մեղմիկ զարկում էր լարին, եւ հեծկտում էր լարը եւ պատում էր լարը սիրո մի փոքրիկ վեպ»

(Ավ. Իսահակյան. *Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 3, եր., 1975, էջ 42*)։

Այսպես բանաստեղծի սրտում հասունանում էր սերը դեպի իր ոչ հեռու ազգականի դուստր Շուշանիկը, որ դառնալու էր նրա պոեզիան ոգեշնչող նվիրական կույս եւ անհուն տառապանքի առարկան։ Ջրի փրփուրից ծնված կանացի դյուքիչ կերպարը, որ դարերով խանդավառել է բանաստեղծների երեակայությունը, նույնքան հին է, որքան եւ բանաստեղծական սերը։ Հնդկական հինավուրց լեգենդը պատմում է, որ երբ Մահադեւա աստվածը, գեղեցիկ Հնդկաստանը ստեղծելուց հետո, երկնքից իջավ երկրի վրա՝ գմայլվելու իր արարչագործությամբ, նրա հայացքի տակ մաքուր, սպիտակ, քնքուշ ու հոտավետ շուշաններ ծաղկեցին։ Մահադեւան պոկեց շուշաններից մեկը եւ ձգեց կապտագույն ծովի մեջ։ Քամին տատանեց բլուրեղյա ջուրը եւ պարուրեց գեղեցիկ շուշանը սպիտակ փրփուրով։ Մի րոպե, եւ այդ փրփուրի փնջից ծաղկեց կինը, քնքույշ, անուշահոտ՝ որպես շուշանը, թեթե՛ւ որպես քամին, դյուրափոփոխ՝ որպես ծովը, գեղեցկությամբ փայլող՝ որպես ծովային փրփուրը, եւ շատ վաղանցուկ՝ որպես այդ փրփուրը։

Կինը ջրից չոր դուրս եկավ ափը (այդ ժամանակից կանայք միշտ ջրից չոր են դուրս գալիս)։ Տեսնելով կնոջը՝ ծաղկեցին երկրի վրա ծաղիկները, իսկ երկնքից նրան հետաքրքրությամբ նայեցին միլիոնավոր աչքեր։ Այդ աչքերը վառվեցին հրճվանքով։ Այդ ժամանակից էլ փայլում են աստղերը։ Արուսյակ աստղը վառվեց նախաճով, դրա համար էլ նա մյուս շատերից պայծառ է փայլում։

Շարունակությունը՝ էջ 8

Հայրադեսական սուրբ Պատարագ Ժնեւի Սուրբ Հակոբ եկեղեցու 50-ամյակի առիթով



Սկիզբը՝ էջ 5

Նույն նախանձախնդրությամբ զորեղ պահեք եկեղեցափրության եւ հայրենամոլորմանի ձեր ոգին, ձեր հավատը եւ միշտ Աստծո կամքի համաձայն ընթանալու վճռականությունը, ինչպես Սուրբ Գրքըն է պատվիրում՝ «բոլոր բարի գործերում պտղաբեր լինելու եւ Աստծու գիտությանը աճելու համար» (Կող. Ա 9–10)»,– ընդգծեց Հայոց Հայրապետը։

Հոբելյանական այս ուրախ առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն ի շնորհավորանքներն ու զմահատանը բերեց Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Գուսան վրդ. Ալեքսանյանին, Սուրբ Հակոբ եկեղեցու վարչության ատենապետին եւ անդամներին ու հայ համայնքի հավատավոր բոլոր անդամներին՝ մաղթելով ուժ եւ կրող եկեղեցաշեն ու ազգամեր գործերում, որպեսզի նվիրումով ու ջերմեռանդությամբ կարելու մասնակցություն բերեն ինչպես համայնքային կյանքի զորացմանը, այնպես էլ Շվեյցարիայի բարգավաճմանը։

Վեհափառ Հայրապետը հայցեց, որ բարին Աստված Իր ամենախնամ Աջի հովանու ներքո պահպանի աշխարհը խաղաղության մեջ, բարոր ու ապահով պահի Շվեյցարիայում ապրող Իր հավատավոր զավակներին՝ շնորհագարդե-

լով ու լիացնելով Իր առատ պարգևներով։ Նորին Սրբությունն աղոթքով մաղթեց, որ Տիրոջ օրհնությամբ սիրո եւ խաղաղության մեջ շենանան Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը եւ աշխարհասփյուռ մեր ողջ ժողովուրդը։

Ի հիշատակ հոբելյանական այս առիթով հայրապետական այցելության՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Հակոբ եկեղեցուն ընծայեց մարմարե խաչքար։

Հավարտ Ս. Պատարագի՝ եկեղեցու համընկնությունների սրահում, մասնակցությամբ հավաքված ժողովրդի, տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Նորին Սրբությանը բարիգալստյան խոսքով ողջունեց Ժնեւի Սուրբ Հակոբ եկեղեցու վարչության ատենապետ Վիգեն Վարձպետը։

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին իր օրհնությունն ու պատգամը բերեց հավատավոր ժողովրդին՝ մասնավորապես պատգամելով աշխույժ պահելու համայնքի ազգային-եկեղեցական կյանքը, զորացնելու հայրենիքը եւ զորանալու հայրենիքով, սերնդեսերունդ փոխանցելու նախնայաց ավանդած սրբազան ժառանգությունն ու արժեքները։ Նորին Սրբությունն ընդգծեց, որ հզոր հայրենիքն է սփյուռքի կենսունակության աղբյուրը եւ հուսալի երաշխիքը։



Ընդունելության ընթացքում իր ուրախությունը, ժնեւ այցի եւ հայ համայնքի հետ համընկնման առիթով, հայտնեց ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը։ Վերջինս իր շնորհավորանքները բերեց շվեյցարահայ համայնքին՝ անդրադառնալով նաեւ Հայոց եկեղեցու հայապահպան կարելու առաքելությանը։

ՀՀ դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանն իր հերթին համայնքին փոխանցեց ՀՀ արտաքին գործերի նախարար Ջոհրաբ Մնացականյանի շնորհավորական ուղերձը՝ եկեղեցու հիսնամյակի առիթով։

Վերջում տեղի ունեցավ աջահամբույրի արարողությունը, որի ժամանակ ներկայացրեցին հարավորությունն ունեցան անձամբ մոտենալու Հայոց Հայրապետին եւ ստանալու նրա օրհնությունն ու հայրական հորդորները։

Երկօրյա այցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպումներ ու քննարկումներ ունե-

ցավ թեմի թեմական եւ ծխական մարմինների պատասխանատուների եւ անդամների հետ եւ իր թեղաորությունները կատարեց թեմական եւ համայնքային կյանքի առավել զորացման եւ արդյունավորման համար։

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի



